

ՀԱՅ ԳԻՒՂԸ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԵՑ *

Ոգելից ըմպելիքների մասին.

11. Խիբուրգիական դէպքերի մասին կարելի է ասել հետևեալը.

Մի ժամանակ մեր հասարակութեան մէջ թէ ինտելլիգենտ և թէ ազէտ, այն խորին համոզմունքն էր տիրում, որ ուս (նշանակում է ուսում ստացած) բժիշկները վէրք բուժելու և կտորածը կապելու և գուրս ընկածը տեղը գցելու մէջ չեն կարող մրցել տեղային խիբուրգների հետ—ջառահների, դրա համար էլ շատ սակաւ էին դիմում առաջիններին: Բայց այժմ այդ յափշտակումը չկայ:

Խիբուրգիան այնպիսի դարգացման է հասել, որ կոյր պէտք է լինել շտեմնելու նրա հրաշագործութիւնները: Այժմ հէնց իրանք տեղական խիբուրգները գիտակցում են այդ բանը, և նրանց բուժական սխառեմը կրում է իւր վրայ գիտական խիբուրգիայի ազդեցութիւնը՝ և բուժական միջոցները՝ իօդօֆօրմ, կսերօֆօմ, մինչև անգամ կօկաինի գործածութիւնը ևայլն, կ'գտնէք սրանց մօտ: Բայց եթէ կան տեղական հմուտ խիբուրգներ, պատահում են և շատ տղէտներ, որոնք մեծամեծ փրատներ են պատահառում: Քանիցս դիմել են մեզ, որ այս ինչ հաքիմը այսքան փող վերցնելով, փոխանակ բուժելու՝ կամ վատացրել է հիւանդի դրութիւնը, կամ մեռցրել, ուստի և խնդրում էին ինձ իշխանութեան միջոցով պատժել նրանց կամ փողը յետ դարձնել:

Մի անգամ էլ մի հայ գիւղացի բերել էր իւր փոքր տղային, մէկ փաթաթուած բան ձեռքին, որի մէջ գրած էր իւր տղայի ձեռքի փթած տախտակը, որը ընկել էր կտորած ձեռքը պինդ կապելուց: Կրկնում եմ՝ տեղական խիբուրգների մէջ կան և փորձուածները, բայց համեմատել դրանց նորագոյն խիբուրգական մասնագիտութիւն ստացած բժիշկների հետ, նշանակում է շատ ազէտ լինել: Յանկալի է միայն, որ գաւառում գործող բժիշկները մի քիչ փորձուած լինին մասնագիտօրէն խիբուրգիայի և ծննդաբերական օպերացիայի մէջ, որովհետև պատահում են դէպքեր, ինչպէս մեզ քանի-քանի անգամ պատահել է այնպիսի օպերացիաներ անել, որոնց անելու համար ես երբէք չէի կարող մտածել ան-

*) Տե՛ս «Արարատ» Փետրվ.—Մարտ համար, էջ 479

դաս: Այս միջոցներով է, որ դաւառի բժիշկը հոշակ է ստանում ազգաբնակութեան մէջ և նիւթականապէս լաւ վարձատրւում: Պատահում են գիւղերում և շրջիկ հէքիմներ, որոնք զալիս են ուրիշ տեղերից կամ պարսկաստանից և որոնք առատ հունձ ունենալով, սրան նրան խափելով փախչում են: Դրանց մէջ պատահում են աչքի վրայ օպերացիա անողներ, որոնք ըստ մեծի մասին՝ փոխանակ աչքին լոյս տալու, կուրացնում են: Վերոյիշեալից պարզ է, որ ցանկալի է, որ դիտական բժշկականութիւնը աւելի լայն տարածուի և մատչելի դառնայ գիւղական հասարակութեան, որը անհամեմատ աւելի քիչ կ'կեղեքուի և կանոնաւոր բժշկութիւն կստանայ: Եւ այդ ժամանակ տղէտ հէքիմները չկարողանալով մրցել դիտական բժիշկների հետ՝ կանհետանան, ինչպէս նկատւում է այժմ այն տեղերում, ուր կայ բաւարար բժշկական օգնութիւն:

12. Հարկաւոր է խօսել ջղային և հոգեկան հիւանդութիւնների մասին, որոնք բաւական տարածուած են գիւղական ազգաբնակութեան մէջ, մանաւանդ իգական սեռի: Եւ դա հասկանալի է, քանի որ՝ շնորհիւ վաղաժամ ամուսնութեան^{*)} ստանում է զանազան սեռական հիւանդութիւններ, որոնք քայքայում են նրա ջղային սիստեմը: Եւ եթէ դրան աւելացնենք իգական սեռի սարսափելի բարոյական դրութիւնը, նրա ստրկական կեանքը կհսայրի, պատրօնի և առհասարակ տան մեծերի մօտ և վերջապէս իւր ամուսնու, որը յաճախ ֆիզիքապէս տանջում է նրան, դանակոծելով ելն, այն ժամանակ հասկանալի կլինի իգական սեռի ջղային սիստեմի քայքայման պատճառները: Էլ չեմ խօսում նրա անբաւարար աննդառութեան, ոյժերի անհամապատասխան մեծ աշխատութեան, երեխաներին ծիծ տալ ելն, որոնք յարուցանում են սաստիկ սակաւարիւնութիւն:

Ջղային հիւանդութիւններից յաճախ են լինում խստիկան իւր ջղաձգութիւններով, լացով, ծիծաղով և մարմնի զանազան տարօրինակ շարժումներով, անդամալուծութեամբ ելն: Եւ այդ տեսակ հիւանդութիւններին տղէտ գիւղացին տալիս է միատիքական նշանակութիւն. վերադրելով այս ինչ կամ այն ինչ սրբերին, այդ իսկ պատճառով նախ և առաջ դիմում են ուխտագնացութեան, որը յաճախ հրաշագործ ազդեցութիւն է ունենում: Շատերը վերադառնում են միանգամայն ազատուած իրանց ջղային հիւանդութիւններից: Այստեղ գործում են մի կողմից հիւանդների հա-

*) Այդ քառմանի սովորութեան պատկերը շատ լաւ նկարագրած է մեր յայտնի՝ ժողովրդական կեանքի մասին՝ գրող Ս. Տէր-Աւետիքեանը, իր ժողովածուի մէջ. — 49 12 Թ. հրատարակութիւն Հ. հրատարակչական ընկերութեան:

ւատը, միւս կողմից՝ համապարհորդութիւնը, ազատ, հետաքրքիր և զուարճալի ժամանցը բնութեան ծոցում, ուրախութիւնը և ժամանակաւոր հանգստութիւնը, որը կարող է բուժել նրա հիւանդութիւնը:

Վերջերս հոգեկան-ջղային հիւանդութիւնների բժշկութեան մէջ ահագին նշանակութիւն է ստացել «բացիժնալ հոգերութութիւն» (psychothérapie rationnelle), որը պիտի կայանայ դատողութեան և համոզման մէջ (— par raisonnement et par persuasion): Այդ շեօլայի հիմնադիրը հաշոււ է Բեյնի պրօֆ. Dubois (Դիւբուա), որը ունի նշանաւոր գրուածքներ այդ հարցի առթիւ, որոնց մէջ մանաւանդ յայտնի է հետեւեալ աշխատութիւնը (*Les psy. Cloquentes et leur traitement moral*^{*}): Հիմնական գաղափարը այդ գիտնականի այն է «*Animal psychique il faut traitement psychique*» առել է թէ՛ հոգեկան հիւանդին հոգեկան բժշկութիւն է հարկաւոր: Այդ հարցի մասին մենք մտադիր ենք աւելի երկարօրէն խօսել ապագայում. ներկայումս մենք կամենում ենք մատնանշել, որ հաւատար, ինչ յատկութիւն էլ նա լինի, թէ կրօնական և թէ այլ, ունի ահագին նշանակութիւն փունկցիժնալ ջղային հիւանդութիւնների բուժման գործում: Վերայիշեալ շեօլայի ներկայացուցիչներից մէկը թէ. Մարցինկովսկին (Marzinkowsky) իւր յայտնի գրուածքներում յայտնում է՝ ի միջի այլոց հետեւեալը. «Ջղայնութեան շատ աջակցել է տարածումը XIX դարում մատերիալիզմը, որը խորտակել է (разрушил) կրօնական և բարոյական աշխարհայեցողութիւնները, որոնք շատերին ծառայել են իրրի նեցուկ և միտքարութիւն շտալով ըստ մեծի մասին խորտակուածների փոխարէն ոչինչ»:

Պրօֆ. Déjerine (Դեժերին) հոշակաւոր Շարկոյի ամբիոնի փոխարինողը գրում է՝ հոգեկան և ջղային հիւանդներին կարելի է բուժել այն ժամանակ, երբ նրանք կսկսեն հաւատալ ձեզ» — զգացմունքը ստեղծում է այն աւսմամբերան, առանց որի անկարելի է որեիցէ հոգերութութիւն: H. nyapas de psychothérapie Sans tor^{**}): Մեր բաղմաշխատ բժշկոյ. Բարայեանցը իւր ուխտագնացութեան յօդուածում (Բժիշկ. № 10, 1911 տ.) նայն միտքն է յայտնում, որի մասին յիշուեց վերեւ:

Նայն նշանակութիւնն է տալիս հաւատին և պրօֆ. Եարօցկին^{***}) իւր հետաքրքիր շարադրութեան մէջ հաւատը հաշուելով

^{*}) Основныя направления Современ. рационалист. психотерапій. Др. Лихницкаго журналъ «Психотерапія», №№ 1, 2, 1912 г.

^{**}) Նայն աղբիւր՝ թէ. Лихницкаго

^{***}) Проф. Ярецкий. Идеализмъ, какъ физиологическій факторъ. Юрьевъ 1908 г.

ի շարս իղէալիզմի, որի դերը այնքան մեծ է մեր կեանքում թէ գոյութեան կռուի մէջ, թէ հիւանդութեան և թէ զանազան զըմբախտութիւնների գէպերում: Այդ հետաքրքիր դրքի մասին մենք խօսել ենք մեր մամուլում:

Մենք շատ փաստեր կարող ենք բերել հաւատի, լայն իմաստով վերցրած, զօրութեան մասին, բայց այդ մեզ շատ հետուն կտանէր և մենք շեղուած կ'լինէինք մեր ընտրած նիւթի սահմանից, ուստի և բաւականանում ենք վերոյիշեալ հեղինակաւոր անձանց կարծիքներով: Դիւղերում, բացի սրբերից, դիմում են և ուրիշ զանազան միջոցների՝ դիր կապելուն, զանազան մօլլաների օգնութեան, որոնք ինչ որ թալիսման են կապել տալիս հիւանդի հազուատի վերայ ելն:

Աւելի ահուկի է խելագարների դրութիւնը: Սրանց ձգում են մի առանձին տուն, յաճախ շղթայում են, որ չփախչեն, գծութիւն չանեն: Դիմում են երբեմն սրբերին և ջինդաւ կոչուող մասնագէտներին, որոնք ենթադրելով, որ հիւանդի մէջ մտել են ինչ որ սատանաներ, քաջքեր, որոնք ստիպում են գծութիւն անելու. ստիպում են նայել ջրին, ուր իրր երևում են այդ սատանաները և ձեռնելով ասել են տալիս նրանց անունները ելն, և իրր թէ ջրում բռնում են նրանց, զցում խողովակի մէջ և թաղում հողում: Բայց այդ միջոցը խելացնոր մարդկանց վերայ, որոնք կորցրած լինելով գիտակցութիւնը, չեն պատասխանում, ուղեկցում է սարսափելի ձեռով ելն:

Թէ որ աւաիւհան անբաւարար է խելագարների դրութիւնը Ռուսաստանում, ցոյց է տալիս բժ. Մաշկենկօն (Машенко) «Կուրանեան շրջանի բժշկական համաժողովում խելացնորների հոգատարութեան առթիւ», նորա զեկուցումից երևում է հետևեալը. «Կուր. շրջանի 4000 խելագարների համար միայն 62 անկողին կայ երկու հիւանդանոցներում, մնացածները մնում են ժողովրդի մէջ: Նասերը այդ խեղճերից պահւում են շղթայած կարցերներում, ուր նրանք ջարդում են իրանց գլուխները վանդակների վերայ: Տղէտ ազգարնակութիւնը պսակում է և մարդու է տալիս նրանց այն յուսով, որ ամուսնութիւնից յետոյ կ'առողջանան. 798 այդ հիւանդներից 260 հոգի պսակուած էին: Նոյնը և միւս գաւառներում Ռուսաստանում» (Др. Поденбауки, անընթեռնելի) 1912 թ.

Կայ բուժման եւ մի այլ միջոց. դա երաժշտութիւնն է, որը գործադրւում է գլխաւորապէս խտերիկայ ունեցողների վերայ: Այդ հիւանդութիւնը կոչւում է «խաղալացաւ» թուրքերի մօտ՝ «չալդի»:

Այդ միջոցի մասին մենք գրել ենք «Առողջապահիկում» և Լրագրում: Դրել է և մեր յայտնի ազգագրագէտ (Этнограф) Ե. Լա-

լայեանը «Աղղաղրական հանդէսում»։ Պէտք է ասել, որ բուժման այդ միջոցը դորձ է դրում Նարարազում և այնտեղից դադարեցնելի մօտ — Շամախու, Նախուայ և Արէշի կողմերի հայ աղղարնակութեան մէջ։ Եւ յիշում եմ երեխայութիւնից, թէ ինչքան լայն տարածուած էր այդ բանը Զրարերդ գաւառամասում. — այժմ Զիւանշիւրի գաւառ. — և իմ մայրս ու մօրաքոյրս մեր տանը՝ Կուսապատ գիւղում, քանիցս ենթարկուել էին այդ տեսակ բուժման։

Ինչպէս է կայանում այդ բուժական սիւսեմը։ Զուռնա-դաւալի նուազածութեան տակ պարում է հիւանդ կիներ, և երբ նա յոգնում է, այն ժամանակ ուրիշները՝ զլխաւորապէս տղամարդիկ՝ ձեռքերից բռնած պարեցնում են մինչև հիւանդի ուժասպառ լինելը։ Յետոյ հնչում է փողը-դուդուկը և սկսում են ախուր եղանակներ երգել, լացել, լացացնել։ Այդ ամենը տեսւմ է մի քանի օր։ Հիւանդը ուժասպառ եղած քնում է և յետոյ մեծ ախորժակ ունենալով սկսում է ուտել, քնել ևն։ Շատերը, ինչպէս իմ մայրս, մօրաքոյրս՝ Մելիք-Ալլահփերդեանը պատմում էին, նրանք բոլորովին առողջանում էին։

Մինչդեռ առաջ նրանք տեղերում պառկած, դանդաղում էին զանազան ցաւերի վրայ, ախորժակի պակասութիւն, անքնութիւն, ախուր արամաղրութիւն ևն։ Այդ ամենը անցնում է վերոյիշեալ բժշկութեան ձևով։ Այժմ այդ ձևը համարեա անհետանում է։ Կայ մինչև անգամ յատուկ ախտանշան «խաղալացաւի» այս ինչ կամ այն ինչ անձի մօտ։ Եթէ օրինակ նա երաժշտութիւն լսելիս պարում է և չի դադարում պարելուց, այդ նշան է, որ նա խաղալացաւ ունի։ Խաղալացաւի բուժումը բնախօսօրէն պէտք է բացատրել հետեւեալ կերպով. այստեղ ներդործում են երաժշտութիւնը և ուժգին ֆիզիքական մարզանքները։

Երաժշտութեան ազդեցութիւնը մարդու վրայ շատ մեծ է. նա՝ արագացնելով սրտի բարախումը, աջակցում է արեան շրջանառութեան և դորանով բարձրացնում է՝ մի «րեկիցէ պատճառով թուլացած» ֆունկցիաները արիւնատար զործարանների։ Ապա ուրեմն խաղալացաւի ուժգին մարզանքները վտանգաւոր բուժական միջոցներ են, եթէ հիւանդ կանայք տառապում են վերոյիշեալ հիւանդութիւններով։ Պէտք է ասած, որ այժմ այդ տեսակ բուժումը մոռացութեան է տրւում. այժմ շատ սակաւ է լսւում նրա մասին այն շրջաններում, ուր մի ժամանակ նա շատ էր տարածուած։ Արեւում իմ եղած ժամանակ, մի մասնադէտ հայ կար, որը համարւում էր խաղալացաւի բուժող՝ թէ հայերի՝ և թէ թուրքերի մէջ, և նա այդ միջոցը զործադրում էր և այր մարդկանց վրայ ևս։

Երաժշտութիւնը՝ այդ տեսակէտից՝ դառնում է օգտաւէտ

գիմնաստիկա մեր անօթային սիստեմին, որի կանոնաւոր գործունէութիւնը կարեւոր է կենսական երևոյթների նորմալ ընթացքի համար, ինչպէս մեր ուղեղում, նոյնպէս և մեր մարմնի բոլոր գործարանների համար (պրօֆ. Թարխանով):

Մեր բաղմաշխատ բժ. Բարայեանը իւր նորերս հրատարակած շատ շահեկան յօդուածում*) զրում է, որ «Փարիզում պրօֆ. Կոցցիի նախագահութեամբ կազմուած է l'oeuvre musicale des hospitalux de Paris, որով, հիւժախտաւորները, ջղայինները, մելամաղձոտները, խելագարները, հիւանդանոցներում պիտի վայելեն զուարթ, բարեկաւոյ ժամանց: Նշանաւոր երաժիշտների գեղեցիկ և հոգեզմայլ կատրոնների ազդեցութեան տակ»:

Հատ Դօդելի (Dodely)՝ ամենից շատ ազդեցութիւն ունի ազգայնական եղանակը մարդկանց վերայ: Ֆրանսիացի բժ. Ֆերէնդիակ է երաժշտութեան բարերար ազդեցութիւնը հիստերիկ կանանց վերայ: Զանազան մարշերը՝ թէ մարդկանց, մանաւանդ զինուորների և ձիերի վերայ՝ մեծ ազդեցութիւն ունեն, աւելացնելով նրանց ոյժը: Մի խօսքով՝ երաժշտութեան ազդեցութիւնը շատ հիւանդութիւնների, մանաւանդ ջղայնութեան դէպքերում, լաւ հետեւանք է ունենում:

Եթէ երաժշտութիւնը մի անմեղ և դուրեկան փակտոր է, նոյնը չի կարելի ասել այն ուժգին մարզանքների մասին, որոնց ենթարկւում են խաղաղացաւոյ կանայք: Կան այնպիսի հիւանդութիւններ օրինակ՝ սրտի իւր անօթներով, թոքերի, ուղեղի, երբ զօրեղ ֆիզիքական մարզանքները կամ աշխատանքը, զանազան սպորտները անթոյլատրելի են, որովհետեւ կարող են պատահել վատնդաւոր անակնկալներ, մինչև անգամ մահ: Մեր ընկերակից հանգ. բժ. Ա. (նահանգական բժիշկ) իւր շեմոդանը վագօնից ցած իջեցնելիս՝ յանկարծամահ եղաւ սրտի պայթումից (նա ունէր անեփրիզմա):

Մարզանքները արիւնաշրջական գործարանների հիւանդութեան դէպքերում, երբ նրանք կատարուին առանց չափի և խելացի նախազգուշութիւնների, կարող են առաջացնել ամենատխուր ակնկալներ, հետեւանքներ, սրտի կաթում, թոքերի և ուղեղի ապօպլիկսիա-արիւնհոսութիւն անօթների պատուելուց, ինչպէս զրում է յայտնի գաղիական գիտնական Zagrange-ը իւր յայտնի աշխատութեան մէջ**):

*) Նուագածութեան ազդեցութիւնը մարդու առողջութեան վրայ. Բժու. Բարայեան. Տարագ № 1. 1915 թ.

**) F. Zagrange. Физическія упражн. какъ врачебн. методъ. перв. съ франц. 1896 г.

13 Նիճուների մասին: Մեր գիւղական ազգաբնակչութեան ամենամեծ գանգատը ճիճուների մասին է, ինչպէս մենք դիտել ենք մեր երկարամեայ պաշտօնավարութեան ժամանակ. նոյնը կարելի է ասել և թուրքերի վերաբերմամբ: Եւ արդարեւ, այդ քանը յաճախ է պատահում նրանց՝ թէ մեծերի և թէ փոքրերի մօտ: Եւ գիւղացին ոչ մի տեղ այնպիսի պատրաստականութեամբ չի ընդունում, ինչպէս ճիճուի դէմ տրուած դեղը, շնայած, որ նա սարսափելի համ ունի, և որը տալիս ենք տափակ ճիճուի— երիզորդի դէմ:

Քանի որ ճիճուն այդքան տարածուած է մեր գիւղական ազգաբնակչութեան մէջ, հարկաւոր է խօսել դրա մասին մի քիչ երկարօրէն: Մեր գիւղերում պատահում են զլխաւորապէս՝ տափակ և կլոր ճիճուներ. վերջինները մանաւանդ երեխայոց մօտ, որոնք յաճախ դուրս են դալիս փախելիս բերանով:

Ճիճուները՝ բաժանուած են 4 տեսակների, որոնք ապրում են թէ մարդկանց և թէ կենդանիների մէջ իրրեւ պարազիտներ: Նրանք են՝ 1, երիզորդներ, 2, ծծիչներ—сосальщики (Pentastodes), 3, կլոր որդեր (Nematodes), և 4, փշազլուխներ (колючеголовые): Առաջին երեք տեսակները ապրում են մարդկանց և կենդանիների մէջ, իսկ վերջինը բոյսերի մէջ:

Ճիճուները՝ ապրելով մարդկանց և կենդանիների մէջ կարող են դառնալ պատճառ շատ զանազան և ծանր խանգարումների (Разстройство), որոնք կոչւում են ճիճուի հիւանդութիւններ (Helminthiasis): Նրանք՝ շատ յաճախ՝ կարող են պատճառ դառնալ մահացու հիւանդութիւնների (пугающие последствия), էիինօկօկ լեարդում, արիխինիօզ), որովհետեւ ճիճուները՝ մեծ մասամբ ապրում են աղիքներում, ուստի և նրանց ներկայութիւնը արտայայտուած է այդ շրջանի խանգարումներով, ախորժակի կորստեամբ, սրտախառնութեամբ, փախումով, փորի լուծումով, փորի կապութեամբ, ցււերով փորի շրջանում, ծանրութեամբ կրծոսկրի գդալի տակ ևայլն: Ոչ սակաւ երևում են արտացոլուող (отраженный), բեֆիկիտիվ խանգարումներ, մանաւանդ ջգային սխաւեմի, ջգաձգութիւններ, էպիլեպսիա (ընկնաւորութիւն), զլխացւաւեր ևայլն: Վերջապէս կերակրուելով մարդու և կենդանիների հաշւով, նրանք փնտսում են սննդառութեան, յարուցանելով սակաւարիւթիւն: Ճիճուները համեմատաբար անփնաս են, եթէ գտնուում են աղիքներում, բայց վտանգաւոր են նրանք, երբ գտնուում են մարմնի ոստայներում, անցքերում, սրտի պատերում, աչքում և երկիւղը կախուած է, թէ որտեղ են գտնուում նրանք: Ահա ինչու ճիճուները պիտի իւր ժամանակին հեռացնել մարդու կազմուածքից, տալով համապատասխան դեղեր:

Մեր գիւղական ազգաբնակչութեան մէջ գլխաւորապէս պատահում են 1. երիզորդներ՝ խոզի՝ *Laenia solium*, 2. երիզորդ տաւարի *Laenia saginata*, 3. *Laenia*-ողնորդ-*echinacoccus*, 4. լայն երիզորդ (*Bothrio cephalas latus*)։ Առաջի տեսակը խոզի հում մսից է ընկնում մարդու մէջ, նա ունի բացի 4 ձեռններից և կարթեր, որոնցով ամուր կաշում է աղիքներին, ուստի և դժուար է արտաքսւում։ Նորա երկարութիւնը հասնում է 3—3½ մետրի։ Նրա փամփուշտային ձևերը պատահում են գլխաւորապէս՝ խոզի մսի մէջ, որը հասարակ աչքով կարելի է տեսնել. այդ դրութեամբ նա կոչւում է ֆիննա։ Մարդկանց մօտ ֆիննա շատ քիչ է պատահում. բայց եթէ պատահում է, նա կարող է լինել մորթու տակ, մկաններում, սրտի պատերում, ուղեղում, աչքում ևայլն։

Այդ դէպքերում հետևանքը շատ վտանգաւոր է լինում։ 2. Մեծ երիզորդ-կամ եղան (*бываѣтъ*). աւելի երկար է լինում 7—8 մետր։ Նա ապրում է մարդկանց բարակ աղիքներում։ Նա տարածուած է այնտեղ, ուր տաւարի հում միս են դործ անում։ Պետերբուրգում 3,660¹/₆ ազգաբնակչութեան տառապում է այդ պարազիտից։ Այդ պարազիտը կարթեր չունի, ուստի և նրան հետաքննելը շատ հեշտ է։ 3. Աւելի վտանգաւոր է մարդու համար իւր փամփուշտային շրջանում (*періодъ*) ողնորդը, որը ապրում է շան, գայլի և չախկալի աղիքներում։ Նա փոքր է, 5 հազարամետր երկարութեամբ։ Նորա փամփուշտաձևը, որը կոչւում է էխինոկոկկ (*эхинококкъ*), ապրում է խոզի, տաւարի, ոչխարի, ձիու, էշի ևայլն. նոյնպէս և մարդու մէջ, որի մօտ գլխաւորապէս պատահում է լեարդում, թոքերում, երեկամուկներում ուղեղում, սրբտում, փայծախում, աչքերում, ոսկրներում, անօթներում ևայլն։ Երիզորդը յաճախ լինում է այնտեղ, ուր շների հետ շփումը աւելի է. օրինակ Իսլանդիայում, և հիւսիսային երկրներում։ Փամփուշտները երբեմն հասնում են երեխայի գլխի մեծութեան և նորանց մէջ կարող են լինել բազմաթիւ. հարիւր հազարաւոր երիզորդի գլուխներ։ Շատ վտանգաւոր է էխինոկոկկի ներկայութիւնը սրտի պատերում, ուղեղում և սրանց նման կարևոր դործարաններում։

Հարկաւոր է ինչքան կարելի է հետուն պահել շներից, չթոյլ տալ լիզել, դիպչել երեսին, բերանին, այլապէս հեշտ է վարակուելը։ Էխինոկոկկի փամփուշտները կարելի է հետաքննել միմիայն օպերացիայով, եթէ հնաւոր է այդ անելը, օրինակ լեարդի վերայ։ 4. Լայն երիզորդ. նրա երկարութիւնը հասնում է 8—9 մետրի։ Նա ընկնում է մարդու մէջ ձկան մսի հետ։ Ուստի և նա շատ է պատահում այն տեղերում, ուր ձկան միսը շատ է դործ անում։

Նա ունի 3000 յօդեր և տարուայ ընթացքում արտաբուսում է մինչև 60 սանաչափ (футы) յօդեր (членики): Նա փաստապես է նորանով, որ շատ մեծ քանակությամբ սնունդ է խլում մարդուց և իրա շարժումներով զրգուսում է աղիքները: Նրա ձուերը զարգանում են ջրում:

Կլոր ճիճուներ ասկարիդ. (аскарида человека) անձրեային ճիճուի նման, բաւական մեծ. արուն 250 հազարամետր, էգը՝ 400 հազարամետր, գլխաւորապէս միջին հասակի երեխայոց մօտ է պատահում. երբեմն նրանց թիւը հասնում է 100—1000-ի: Նրանց վտանգը շատ, շատ մեծ է, երբեմն դուրս են գալիս բերանից, կարող է ընկնել կոկորդը և խեղդել երեխային, քթի մէջ, ականջի ներսի խորշը (внутр. уха) լեղիի անցքը՝ յարուցանելով դեղնացաւ կային: 2. Մազորդ (острая дётекка) պատահում է հաստ աղիքներում և յետանցքում (задн. проход) և աղջկերանց հեշտոցում (вагинале): Պետերբուրգում 140/6 երեխայոց տառապում է այդ որդից:

Նաա վտանգաւոր է արիֆինա կոչւող որդը: Որձը՝ 1.5 հազարամետր, էգը՝ 3 հազարամետր երկարութեամբ: Մա կենդանածին է և միանգամից ծնում են մինչև 1500 հաստ:

Նա ապրում է մարդու բարակ աղիքներում, խոզի, մկան, աղուէսի և այնտեղից աղիքների պատերով թափանցում են անօթները և տարածւում մարմնի դանազան մասերը, գլխաւորապէս մկանները, ուր կազմում են թաղանթներ, որոնց մէջ և ապրում են: Մկանային արիֆինաները պատահում են սովորաբար խոզի մօի մէջ, նոյնպէս մկների, աղուէսի, մարդու, շան, ոչխարի և այլն:

Տրիխինան առաջին անգամ գտել է Պագէ (Paget) մէկ դիակում 1835 թ.:

Տրիխինան երբեմն շատ վտանգաւոր է լինում. էպիդեմիաների նման պատճառելով մահուան մեծ տոկոս: Օրինակ Գերմանիայում մի քանի շարթում Гааверս Ենտ դղեակում 3000 քնակիչներից մեռան տրիխինայից 100 մարդ:

Տրիխինայով վարակուելը արտայայտւում է խոլերայի նման ախտանշաններով, ահա ինչու նա կոչւում է տրիխինի խոլերա (Cholera trichinosa), փախում լուծումն, տենդ և այլն:

Տրիխինայից ազատ մնալու միակ միջոցն է, քննել խոզի միսը, որը գործադրւում է մեծ քաղաքներում միկրոսկոպի միջոցով, կամ առհասարակ միսը լաւ եփել, խորովել և տապակել, որ հում չլինի: Բայց գլխաւորը լաւ հսկողութիւնն է անասնաբույժների միջոցով, որ ոչ մի խոզի միս առանց քննութեան չ'ծախուի շուկայում, ինչպէս և այդպէս կատարւում է Թիֆլիսում թէ սպանդանոցում և թէ Սուդաստի քաղաքում:

Միւս պարագիծների մասին, որոնց թիւը շատ մեծ է, մենք չենք խօսում, որովհետեւ նրանք մեզ մօտ սակաւ են պատահում:

II

Բժեկական մարմինը մեր երկրում.

Մեր գիւղական ազգաբնակչութիւնը բաւարար կերպիւ չի կարողանում օգտուել ուսում առած բժիշկների օգնութիւնից, որովհետեւ չկայ բաւականաչափ բժշկական մարմին:

Մէկ փոքր վիճակագրութիւն մեր առածը պարզելու համար: Ռուսաստանում մէկ բժ. է գալիս 6500 բնակիչներին, Անգլիայում՝ 1:1730, Գերմանիայում՝ 1:2820:

Ըստ նորագոյն տեղեկագրի ներքին գործոց նախարարի՝ հաշւում են բժիշկներ Ռուսաստանում 25927, որոնցից կին բժիշկներ 2564, վերջինները՝ ըստ դասանութեանց՝ դասաւորւում են՝

Ուղղափառներ՝	.	.	.	66,7 ⁰ / ₀
Կաթոլիկ.	.	.	.	5,4 ⁰ / ₀
Լիւթերակ.	.	.	.	3,6 ⁰ / ₀
Հրէուհիներ	.	.	.	22,8 ⁰ / ₀
Հայուհիներ	.	.	.	1,3 ⁰ / ₀
Միադաւան	.	.	.	0,8 ⁰ / ₀
Ըստ ընտանեկան դրութեան				
Օրիորդներ	.	.	.	54,5 ⁰ / ₀
Ամուսնաց.	.	.	.	40,0 ⁰ / ₀
Այրիներ	.	.	.	4,9 ⁰ / ₀
Ապահարդ.	.	.	.	0,6 ⁰ / ₀
Քաղաքներում	.	.	.	53,2 ⁰ / ₀
Գիւղաքաղաքում	.	.	.	30 ⁰ / ₀
Ծառայութեան մէջ՝				
Ռաներ	.	.	.	51,7 ⁰ / ₀
Հրէուհիներ	.	.	.	51,0 ⁰ / ₀ *)

Երեւանեան նահանգում մէկ միլիոն բնակչութեամբ, հաշւում են 42 բժիշկներ, ֆելաշերներ 62, մանկաբարձուհիներ 28. մէկ բժիշկին 25,000 բնակչութիւն:

Երզրումի նահանգում 800,000 բնակչութիւն—գալիս է 12 բժիշկ. մէկ բժիշկին 70,000 բնակչութիւն **):

Եւրոպական Ռուսաստանը աւելի հարուստ է բժիշկների կողմ

*) Вреч. газета, № 44, 1914.

**) Հորիզոն, № 246, 1913 տ.

մից. այնտեղ մէկ բժ. գալիս է 7000, Ասիական Ռուսաստանում՝ 1:20,000:

Յայտնի է, որ մեզ մօտ սակաւ բացառութեամբ՝ ամեն գաւառում կայ մէկ բուժող բժ. (Сельскіѣ врачѣ) փոքրիկ հիւանդանոցով (приемн. покоѣ) մէկ քանի մահճակալներով. և այդ բուժարանից օգուտւում է գլխաւորապէս մերձակայ գիւղերի ազգաբնակութիւնը, իսկ հեռուները շատ և շատ սակաւ և այն էլ լաւ եղանակներին, երբ հնարաւոր է սայլերով բերել հիւանդներին: Բսկական օգնութիւնը կարելի է այն ժամանակ, երբ բժիշկը և բուժարանը մօտիկ են ազգաբնակութեանց, ինչպէս Ռուսաստանի Չեմսուօ ունեցող վայրերում, ուր ամեն գաւառում կան մէկ քանի բուժարաններ:

Մեր գիւղական ազգաբնակութիւնը շատ է տուժում մանկաբարձուհիների բացակայութեան կողմից, ինչպէս խօսեցինք դոցա մասին գրուածքիս առաջի մասում: Եթէ Ռուսաստանում նրանց թիւը հասնում է 14,361, բայց հարկաւոր է էլի 60,000*):

Շատ հետաքրքիր է Alfons Fischer-ի «Գերմանիայի սօցիալ-առողջապահական գրութիւնը» գրուածքը, ուր, ի միջի այլոց, տպուած է «մանկաբարձական օգնութեան մասին (Окушерская помощь въ 1909 г.): 1909 թ. եղել են 21000 մանկաբարձուհիներ, ծննդաբերութեան 1,270,413, որոնցից մանկաբարձական օգնութիւն հասցրած 90,20/0, իսկ 9,80/0 առանց այդ օգնութեան: Ապացուցուած է նոյնպէս, որ այդ շրջանները, ուր այդ օգնութիւնը անբաւարար է եղել, ծննդական տենդից (родильная горячка) մեռնողները աւելի մեծ տոկոս են տուել: Ընդհանրապէս Գերմանիայում այդ տենդից մեռնողները՝ յետագայ յարաբերութիւնն են կազմում. 30,80:10,000 ծննդաբեր կանանց**):

Էստ յայտնի պրօֆ. ակուշիօր Բէյնի (Рейнѣ)***) Ռուսաստանում հաշւում է՝ մօտաւորապէս 6000 մանկաբարձուհիներ, բայց հարկաւոր է 60,000, որպէսզի հաւասար լինենք եւրոպական երկրներին և Բալտիական շրջանին, ուր ազգաբնակութիւնը ապահովուած է մանկաբարձուհիների կողմից: Կովկասում հաշւում են մօտաւորապէս 200 մանկաբարձուհիներ, որոնցից գաւառներում 80: Թիֆլիսում հաշւում են 52. հայուհիներ՝ 3 հոգի†):

*) Врач. газета, № 1, 1914.

**) Врачебная газета, № 7, 1913 г.

***) Родовспоможение въ Россіи. Сборникъ доклад. на IX пирогов. съѣзѣ проф. Г. Рейна, 1906 г.

†) Справочная книга. Врач. ветеран. акушерки и. пр. 1911 г.

Մեզ մօտ, ինչպէս մենք գրել ենք «Նոր Առողջապահում», հազիւ 0,5% ծննդաբեր կանանցից բժշկական և մանկաբարձական հրահրութեամբ է ազատոււմ. մնացած 99,5% տղէտ տատմէրների, իսկ դժուար դէպքերում՝ խաշնարածների օգնութեամբ է ազատոււմ: Հասկանալի է թէ՛ մահացութեան որպիսի ահեղի տոկոս պիտի տան ծննդական տենդից մեր ծննդաբեր կանայք, համեմատած Գերմանիայի կանանց, որոնք գտնոււմ են անհամեմատ աւելի բարձր և բարեյաջող պայմաններում առողջապահական, բժշկական և մանկաբարձական օգնութեան տեսակէտից: Գերմանիայում Բրանքենբուրգի պրօվինցիան Վիլհելմ կայսրի յօրելեանին վճռել է բանալ մանկաբարձուհիներ պատրաստելու համար ուսումնարան, որը կարժենայ 1,300,000 մարկ (Врачебн. gazeta, № 13, 1913 г.): Տաճկահայաստանի էրզրումի նահանգում, ինչպէս գրոււմ է իւր զեկուցումների մէջ էրզրումի առողջապահական տեսուչը Վալիին, «չափ զգալի է մանկաբարձուհիների պակասը: Ամբողջ նահանգում ընդամենը 3 մանկաբարձուհի կայ՝ էրզրումում, Երզնկայում և Բարեբրդում... Քանի քանի նորափթիթ կեանքեր զոհ են գնացել դայակների տգիտութեան»^{*)}:

Եթէ Գերմանիայում դեռ միայն 9,80% ծննդաբեր կանանց, առանց մանկաբարձուհու օգնութեան մնալը, համարոււմ է մեծ չարիք, որովհետեւ դրանցից ծննդական տենդով աւելի են վախճանոււմ, ասլա ինչ պէտք է ասել մեր գիւղական կանանց մասին: Եթէ գիւղական ազգաբնակչութեան շնք կարող բաւական թուով բժիշկներ տալ, որը կարելի է յուսալ երբ՝ զեմսու մտցուի, գոնէ աշխատենք մանկաբարձուհիներ տալ, որոնց ցոյց տուած օգնութիւնը ահագին կլինի: Նրանք կօգնեն թէ ծննդաբերութեան ժամանակ, թէ երեխաների կանոնաւոր շննդատուութեան, թէ ծաղկի պատուաստման, նոյնպէս և վերջինիս տարածման առաջը կառնեն: Այդ ամենը տյնքան բեղմնաւոր գործ է ազգաբնակչութեան ֆիզիքական գոյութեան հարցում, որ արժէ դրա վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել: Ուրախալի է, որ մեր Կ. Վ. Բ. Ընկ. իւր ուշադրութիւնը դարձրել է այդ հարցի վրայ: Նա վերակազմելով Խուդատեան դպրոցը, գեղեցիկ ու վեհ նպատակ ունի պատրաստել վարժուհիներ, դաստիարակչուհիներ և մանկաբարձուհիներ այն սանուհիներից՝ որոնք պիտի ընդունեն նրա Խուդատեան ապաստարանը երկրի զանազան կողմերից: Նրանք նախ՝ պիտի վերջացնեն տեղական հայ միջնակարգ դպրոցները, յետոյ արդէն սովորեն այն մասնագիտութիւնը, օրինակ մանկաբարձուհութիւն Օլգինեան դպրոցում:

^{*)} Հօրիզոն № 246, 1913 թ.

III

Եզրափակումն

Մեր գիւղական ազգաբնակչութիւնը՝ թէ առողջապահական և թէ բժշկական տեսակէտից շատ անմխիթաբար դրութեան մէջ է գտնուում, ինչպէս այդ պարզուեց մեր ներկայ գրեւորքի մէջ: Գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ հայ գիւղը չունի գիւղական ինտելլիգենցիա, ինչպէս մեր դրացի վրաց ազգաբնակչութիւնը: Հայ գիւղացին անգրագէտ է, մանաւանդ նրա իգական սեռը: Մեր գիւղի միակ ինտելլիգենտները կազմում են ուսուցչութիւնը և կրթուած քահանայութիւնը, մասամբ էլ փոքր ի շատե ուսում առած գիւղացիութեան շատ շնչին մասը: Մի խօսքով եթէ վերցնենք մեր գիւղացոց ահուկի մեծամասնութիւնը, կարելի է ասել, որ նա ընդհանրապէս կոյր է մտաւորապէս: Ամենից փրկարար և արմատական միջոցը՝ լուսաւորութեան տարածելը պէտք է լինի նրա մէջ: Եւ երբ նա լայն ծաւալ կատանայ, նա կզգայ իւր ցաւերը և կմտածէ նրա դարմանելու մասին: Գ. Գ. Մուրադեանը իւր շահեկան յօդուածում՝ «Կոնտրաստներ» (Մշակ, N 49, 1913 տ.) համեմատելով հայ գիւղացւոց Գերման և Ռուս գիւղացւոց հետ կաւկազում, գալիս է շատ տխուր եզրակացութեան, ապացուցանելով մերոնց սարսափելի յետամնացութիւնը՝ ամեն կողմանէ: Գերման գաղթականութեան ոյժը նա գտնում է նրանց՝ բնակչութեան, աշխատանքի կանոնաւորութեան, և աստիճանաւորութեան, ուժեղ համայնակեցութեան» մէջ: — «Ինչպէս կարող է ապրել մի ազգ, երբ մեռնում է նորա գիւղացիութեան մասսան, ոչնչանում է խաւարից, կեղտից և աղքատութիւնից» կայլն: Գ. Մուրադեանը նախատում է հայ գործիչներին, որ նրանք չեն մտածում հայ գիւղացիութեան մասին, որը ազգի արմատն է կազմում, բայց մինչև այդ ինտելլիգենցիան պիտի ղեկավարէ նրան, ինչպէս այդ տեսնում ենք ռուսների և վրացիների մօտ: Եթէ հայ գրականութիւնը, մամուլը, հայ գրողները ներկայումս անապահով դրութեան մէջ են գտնուում, դրա պատճառը հայ գիւղացիութեան անգրագիտութիւնը և յետամնացութիւնն է: Ապա ուրեմն պիտի աշխատել նրան քարձրացնել, որպէսզի նա պահանջ դրայ գէպի գրականութիւնը, և գրողը: Ահա այն ժամանակ մեծ ասպարէզ կբացուի հայ մտաւորականութեան առաջ, շրէաները վարշաւայում ունեն մի լրագիր «Галль» անունով, որի տիրածը հասնում է օրական 100,000-ի, տարեկան 7 ուրլի բաժանորդագրով, որովհետև նա ունի խոշոր ընթերցող հրէութիւնը: Անգլիացի

հոշակաւոր Բրայսը հայերիս խորհուրդ է տուել՝ «կրթուեցէք, հարստացէք և բաղմացէք»։ Իսկ զբա համար հարկաւոր է ուսում, նիւթական ապահովութիւն, առողջապահութեան և գիտելիքների տարածումն, ստեղծել պայմաններ աճելու և բաղմանալու, որպէսզի կարողանանք կազմել պատկառելի թիւ, որի կարեւորութիւնը այնքան զգալի է այժմ Տաճկահայաստանում, երբ հարց է ծագում հայկական հարցի լուծման մասին։ Անտարակոյժ թիւը մեծ նշանակութիւն ունի մեզ պէս փոքր ազգի համար, բայց, դժբախտաբար, Տաճկաստանի ներկայ ահուկի պայմանները մեծ խոչնդոտ են հանդիսանում բաղմանալուն, երբ հայը ֆիզիքապէս ոչնչացւում է, նիւթականապէս քայքայւում, բռնի կրօնափոխ լինում և ստիպուած գաղթում իւր բուն երկրից։

Ահա ինչպիսի սարսափելի պայմանների մէջ է գտնւում մեր ազգի աճեցումը։ Պէտք է լուրջ ուսումնասիրութեան նիւթ դարձնենք մեր ազգի ֆիզիքական գոյութեան հարցը ամեն տեղ և աշխատենք աջակցել նրան ինչով կարելի է։

Լուսաւոր և առաջնակարգ ազգերի համար, մանաւանդ ֆրանսիայի՝ ազգի թիւը կենսական նշանակութիւն ունի։ Ֆրանսիան մինչև այժմ չի հասնում 40 միլիոնի, մինչ նրա արեւմտեան Գերմանիան հասել է 65 միլիոնի, և հէնց նորերս՝ ինչպէս գրում է Պարիզից Բժ. Վ. Արծնունին (Մշակ № 36. 1913 թ.) ֆրանսիական ազգը մեծ տաղնապի մէջ է, որ Գերմանիան իւր գորքի թիւը մեծացնում է, ֆրանսիան ևս նոյնը պէտք է անէ, բայց ճիշդից, երբ ազգաբնակչութեան թիւը նուազ է։

Հրէաները անցեալ տարի իրանց ազգաբնակչութեան առողջական դրութիւնը բարելաւելու համար՝ Պետերբուրգում հիմնել են «Общество охранения здоровья еврейскаго населения *»։ Ուր մասնակցում են թէ բժիշկներ, թէ իրաւաբաններ, թէ գրողներ ևայլն։ Եւ այդ ընկերութիւնը՝ «Общ. охранения народ. здоровья въ Россіи»։ Իսկ մենք դեռ աւելի քան անտարբեր ենք դէպի մեր ազգի ֆիզիքական գոյութեան հարցը, որովհետեւ բաւականաչափ չենք գիտակցում այդ հարցի կենսական նշանակութիւնը։ Պիտի հասկանանք, որ ազգի ֆիզիքական գոյութեան պայմանները նոյնքան կարեւոր են, որքան նրա բարոյական և մտաւոր զարգացումը։ պէտք է տեսի, որ ազգերի մէջ, ինչպէս մեզ հաւատարմացնում էր մէկ յոյն, ամենից շատ աճում են հրէաները։ հայերը երկրորդ տեղն են բռնում։ Նա լուրջ հետադօտել է աճեցման հարցը Ռուսաստանի բոլոր ազգերի վերաբերմամբ, բայց դժբախտաբար մինչև օրս դեռ չէ տպագրել, ինչպէս ասում էր, իրանից

*) Попул. медиц. журн. 1912 № 12

անկախ պատճառներով, Բայց ի հարկէ միակ թուով չեն բնորոշում ամեն մի ազգի մտաւոր և բարոյական արժանաւորութիւնները: Մեր ազգը յաջող պայմաններում ցոյց է տուել իւր զաւակների ամենամեծ ընդունակութիւնները, տալով Բիւզանդիոնին կայսրներ, Ռուսաստանին՝ հռչակաւոր զօրապետներ, գիպլոմատներ՝ Տաճկաստանին և Եգիպտոսին: Մեզ պակասում է տալ և աւելի մտաւոր ոյժեր գրականութեան, ինչպէս փոքրիկ Նորվեգիան իր 2 1/2 միլ. ազգաբնակչութեամբ, տալով Իրսէններ, Բեերստոններ: Ես չեմ յուսահատուում, և այդ կլինի մեր ազգի մէջ, եթէ նրա պայմանները բարեկարգուեն, եթէ նրա ինտելլիգենցիան գիտակցի իր պարտականութիւնը դէպի իր ազգը, եթէ նա կզգայ, որ նա աւելի մեծ փառք, պատիւ և անմահութիւն կստանայ, երբ կաշխատի իւր ազգի բարձր կուլտուրայի համար, երբ նա կսիրէ իւր լեզուն, ազգի անցեալը և ներկան կուսումնասիրէ, և դրանով ընդհանուր մարդկութեան կաւելացնէ իւր մի փոքր, բայց տենչացող դէպի յառաջագիմութիւն, ազգութեան: Բայց, դժբախտաբար, մենք կարծես աւելի քիչ կճանաչենք մեր ազգի ներքին արժանաւորութիւնները քան օտարները: հռչակաւոր Գլադստօնը հայերի մասին ահա ինչ կարծիք ունէր՝ «Անոնք ներկայացուցիչներ են քաղաքակիրթ քրիստոնեայ ամենահին ցեղերէն մեկուն, աշխարհի ամենէն խելացի և ամենէն ճարտարագործ մէկ ցեղին»: Իսկ Մ. Գարրիէլ Մուրիէ իւր դասախօսութեան մէջ, ահա ինչպէս կորակէ հայերին. «Այս ցեղը ամեն ժամանակ եղաւ ստեղծիչ մը մտածումի և արուեստի: Այն դերը, զոր կատարեց անցեալի մէջ, կուզէ խաղալ նաև ապագայի մէջ, իրաւամբ ես չեմ գիտեր աւելի յուզիչ և աւելի ազնիւ բան մը, քան այն յամառութիւնը ու կորովը, զոր ցոյց կուտայ այս փոքրիկ ժողովուրդը՝ ինքզինքը հարկադրելու համար աշխարհի և տեղը գրաւելու համար վերստին քաղաքակիրթ տիեզերքին մէջ» *): Այս խօսքերով է վերջացրել ազնիւ ֆրանսիացի յօգուածագիրը իւր ասելիքը հայոց հարցի մասին: Մենք էլ յիշեալ ոգևորիչ խօսքերով վերջացնում ենք մեր աշխատութիւնը հայ գիւղացիութեան մասին առողջա-բժշկական տեսակէտից, աւելացնելով, որ «Ֆիզիքական առողջացումը ազգաբնակչութեան ժամանակակից հրատապ հարցերից մէկն է համարւում»:

Բժ. Բ. Աղասարեան

Տփլիս:



*) La petite Geronde. Հայաստանի խնդիրը, Յարգմ. «Բիւզանդիոնում», որից արտատպուել է «Մշակում» (№ 38, 8 մարտի, 1943 թ.):